



European Asylum Support Office

Միջազգային
պաշտպանություն
հայցած դիմողների
վերաբնակեցում

Տեղեկատվական թերթիկ



HY

SUPPORT IS OUR MISSION

Ի՞նչ է վերաբնակեցումը

Վերաբնակեցումը միջազգային պաշտպանության ակնհայտ կարիք ունեցող ապաստան հայցողների տեղափոխումն է մի եՄ անդամ պետությունից մեկ այլ եվրոպական պետություն: Նրանց ներկայացրած ապաստանի համար հայցադիմումը կվերանայվի միայն վերաբնակեցումը տեղի ունենալուց հետո: Ներկայումս վերաբնակեցում հնարավոր է Իտալիայից և Հունաստանից:



ЕАSО-ի աշխատակիցները Իտալիայից վերաբնակեցված անձանց առաջին խմբի անդամների հետ

Դա ինձ վերաբերում է

Դուք վերաբնակեցման իրավունք ունեք այն դեպքում, եթե միջազգային պաշտպանության ակնհայտ կարիք կամ հանդիսանում եք որոշակի երկրների քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող բնակիչ: Ներկայումս վերաբնակեցման իրավունք ունեն Սիրիայի, Էրիթրեայի, Իրաքի, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության, Բահրեյնի, Եմենի և Սվազիլենդի քաղաքացիները: Բացի այդ, վերաբնակեցման իրավունքից օգտվելու համար.

- դուք պետք է միջազգային պաշտպանության համար նախ դիմեք Հունաստանի կամ Իտալիայի իշխանություններին,
- պետք է անցնեք իտալական կամ հունական իշխանությունների կողմից անցկացվող անձի նույնականացման, գրանցման և մատնահետքի վերցման ընթացակարգը,
- պետք է նաև ապացուցեք, որ Իտալիա կամ Հունաստան եք ժամանել 2015թ. մարտի 24-ից հետո:



Ի՞նչու է ինձնից մատնահետք վերցվում

Բոլոր դիմողներից վերցվում են մատնահետքեր: Անկախ նրանից, թե միջազգային պաշտպանություն հայց եք ներկայացնում, թե ոչ, և եթե 14 տարեկան եք կամ ավելի, ձեզնից մատնահետքեր են վերցվում և պահվում ողջ ԵՄ-ի տարածքն ընդգրկող Eurodac կոչվող տվյալների բազայում: Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ընթացքում, քանի որ օրենքով պարտավոր եք մատնահետք հանձնել: Ձեզ վերաբնակեցման իրավունք չի տրվի, եթե մատնահետք չհանձնեք:



Ես հատուկ կարիքներ ունեմ, ինձ առաջնահերթություն կտրվի՞

Այո, վերաբնակեցման գործընթացի ընթացքում խոցելի անձանց առաջնահերթություն կտրվի, և երեխաների շահերի ապահովումն առաջնային կարևորություն կունենա իշխանությունների համար: Խոցելի անձանց թվին են պատկանում՝ անչափահասներ, առանց ուղեկցողի անչափահասներ, հաշմանդամներ, տարեցներ, հղի կանայք, անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնողներ, մարդկային թրաֆիկինգի զոհեր, լուրջ հիվանդություններ կամ մտավոր խանգարումներ ունեցող անձինք և անձինք, որոնք ենթարկվել են խոշտանգման, բռնաբարության և հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բնույթի այլ լուրջ բռնության ձևերի, ինչպես օրինակ՝ կանացի սեռական օրգանների խեղանդամություն:



Որտե՞ղ կարող եմ վերաբնակեցվել

Հետևյալ եվրոպական երկրներից որևէ մեկում՝ Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Զեխիայի Հանրապետություն, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունգարիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա:




Կարո՞ղ եմ ընտրել իմ վերաբնակեցման երկիրը

Ոչ, հնարավոր չէ ընտրել ձեր վերաբնակեցման երկիրը: Սակայն ձեր վերաբնակեցման երկիրը որոշելու հարցում իրավասու մարմինները հնարավորին չափով հաշվի կառնեն ձեր ընտանեկան կապերը, լեզվական իմացությունը և մշակութային կամ սոցիալական այն կապերը, որ ունեք վերաբնակեցման ծրագրում ընդգրկված որևէ երկրի նկատմամբ: Հաշվի են առնվում նաև այլ գործոններ, ինչպիսիք են՝ տարբեր երկրներում առկա տեղերի քանակը և վերաբնակեցման ենթակա այլ թեկնածուների տվյալները:



Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե ուր եմ վերաբնակեցվելու

Վերաբնակեցման մասին որոշումը ձեզ կտրվի գրավոր կերպով:



Որքա՞ն է տևում այդ գործընթացը

Եթե որոշվում է, որ դուք վերաբնակեցման իրավունք ունեք, ապա ձեր տեղափոխումն իրականացվում է հնարավորինս արագ կերպով:



Ի՞նչ է կատարվում վերաբնակեցման մասին որոշումն ստանալուց հետո

Ձեզ տեղեկատվություն կտրամադրվի ձեր տեղափոխման մասին: Ժամանելուց հետո վերաբնակեցման երկիրը կքննի միջազգային պաշտպանության ձեր հայցադիմումը: Ձեր բնակության առաջին տարվա ընթացքում դուք իրավունք չունեք առանց թույլտվության տեղափոխվելու այլ երկիր: Եթե որոշեք տեղափոխվել այս սկզբնական ժամանակահատվածի ընթացքում, ապա ձեզ կվերադարձնեն ձեր վերաբնակեցման երկիր:

